

դու եւ մեք: 10 Ապա թէ ծուլացեալ հեղգաս՝ երկնչիմք, մի՛ գուցէ զաւրացեալ անձամք եւ կամ ուստեք աւգնականութիւն գտանելով՝ ոչ գիտեմք¹, թէ ո՛րպէս պատահեալ իրացն աշխատիցիմք եւ զղջանայցեմք»:

11 Եւ հաճոյ թուեցաւ² բանն մարգպանին եւ ամենեցուն որ ընդ նմայն էին. եւ վաղվաղակի յԱտրպատականէ գունդ առեալ, եւ ի Կոպրեաց մարգպանէն, եւ զգունդն Կատշաց որ զայն տեղաւքն էին՝ գայր հասանէր յաշխարհն Յայոց, ի գետեզերն Երասխայ. կամեցան անցանել ի գեաւդն որ կոչի Նախճաւան, ի սահմանակցութեանն Սիւնեաց:

ԿԸ. Ազդ եղեւ առ տէրն Բագրատունեաց Սահակ, զոր Յայք եւ զաւրավարն Յայոց Վահան ի ժամանակին յայնմ մարգպան կարգէին Յայոց. ասպետն Սահակ՝ զմարգպանութիւնն, եւ Վահան՝ զտերութիւնն Մամիկոննէից³ եւ զսպարապետութիւնն Յայոց. որք Նախ հաստատապէս ի վերնոյն հրամանէ եւ ապա ի Յայոց ընկալան զգործակալութիւնն. առ որս եւ եկք Պարսից գնդին լսելի եղեն: 2 Եւ տեսեալ դեռ եւս անկազմագոյն զպատրաստութիւն զաւրուն իւրեանց՝ խորհէին առ վայր մի յամուր տեղիս գաւառին Տայոց չուել: 3 Եւ դարձեալ զամենայաղթ աւգնութիւնն Աստուծոյ յիշելով՝ ասէին, թէ «Ոչ է յաղթութիւն ի բազումս եւ ի սակաւս⁴, այլ ի վերին կշռողութեան ձեռնն, եւ մանաւանդ մեր գործս, որ ամենեւիմք ի նորա աջողութիւնն⁵ հայի: 4 Արդ՝ պարտ է այլ ոչ ինչ⁶ խորհել բնաւ, բայց ստիպով ընդդէմ նոցա գնալ, եւ զզաւրութիւն յաղթութեանն ի Փրկչէն բոլորեցունց հայցել»:⁷ 5 Խորհէին եւ զայս եւս Աստուծոյ մտարկութեամբ, մնալ մարգպանին Սահակայ եւ սպարապետին Յայոց Վահանայ Մամիկոննէի եւ ոմանց յայլ Նախարարացն անդէն յոստանին, ի քաջալերութիւն եւ ի բարի յոյս երթելոցն յառաջ, ի զարհուրումն եւ ի բեկումն սրտից կողման անաւրինացն: 6 Եւ որք պատրաստեալք այնուհետեւ ի պատերազմն կազմեցան՝ Սիւնին Բաբգէն, զոր անուանեցին ի ժամուն իշխան տերութեան Սիւնեաց, եւ ամենալաւ քաջ սեպուհն Մամիկոննէից Վասակ, եղբայր սպարապետին Վահանայ, եւ Գարշոյլն⁷ Մաղխազ⁸, եւ երկոքեան որդիքն երանելոյ Կամսարականին Արշաւրայ, Ներսէս տէր Շիրակայ եւ Յրահատ նորին եղբայր, եւ երկու արք ի Գնու-

1 ՏՏ. գտանելով որպէս գիտեմք

2 Զ. թուեցեալ

3 Զ. այստեղ եւ յետոյ մեծ մասամբ՝ մամիկոննէից

4 ԲԳտ. եւ ի սակաւ

5 ՏՏ. յաջողութիւնն

6 Զ. ոչինչ այլ

7 Ատ. գայրջոյլն

8 Զ. մաղխազի